ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը «Level-up» (լեվըլ ափ) միջազգային ուսանողական գիտաժողովում

Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ պարոն Աբրահամյան,

Հարգելի հյուրեր, գործընկերներ, սիրելի ուսանողներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը վերջին տարիներին որդեգրել է համալսարանական գիտության զարգացման քաղաքականություն: Մենք հավատացած ենք, որ համալսարանների զարգացումն ու մրցունակ լինելու գրավականներից մեկը գիտահետազոտական ուղղության զարգացումն է, ինչին էլ ուղղել ենք մեր վերջին տարիների գործունեությունը:

Մեր համալսարանում մեծ թափ ստացած գիտահետազոտական աշխատանքներում առաջին անգամ ներգրավվել են նաև ուսանողներ, որոնք այդպիսով հնարավորություն են ստացել ոչ միայն զարգացնելու իրենց հետազոտական կարողությունները, այլև վարձատրվելու:

Ուրախությամբ եմ նշում, որ համալսարանի գործունեության գրեթե բոլոր բնագավառներում էապես մեծացել է մեր ուսանողների մասնակցությունը, բազմաթիվ են նրանց

նախաձեռնությունները բոլոր ոլորտներում: Գովելի է նաև, որ ուսանողներն իրենք են կարևորում գիտական միջոցառումների անցկացումը և ամենամյա դարձած այս գիտաժողովի կազմակերպումը դրա վկայությունն է:

Համաշխարհային տնտեսական մարտահրավերները, որ քննարկման առիթ են Հայաստանի Հանրապետության Կառավարության, պետական պաշտոնյաների և պատկան այլ մարմինների համար, նաև տնտեսագետների մասնագիտական տեսադաշտում են: Մեր համալսարանը հավակնում է փորձագիտական, հետազոտական կարծիքներով իր նպաստը բերել հայրենի տնտեսության զարգացման գործին և այս ուղղությամբ նույնպես գործնական քայլեր կատարվել են: Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ մեր համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը գիտական հետազոտություններ է իրականացնում նախարարությունների համար:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ մեր ուսանողական խորհրդի նախաձեռնած այս գիտաժողովը փայլուն առիթ է ծանոթանալու արդի տնտեսական խնդիրների շուրջ երիտասարդ մասնագետների մոտեցումներին: Մեր ուսանողները մասնագիտական խորը գիտելիքներ, հետազոտելու պատշաճ կարողություններ ունեն, և վստահ եմ, որ այս օրերին հնչել են ուշադրության արժանի զեկուցումներ: Ցանկանում եմ նշել նաև, որ ուսանողական այս գիտաժողովը տարեցտարի որակապես ավելի է բարելավում՝ ներբուհականից միջբուհականի, այս տարի նաև միջազգայինի վերածվելով: Սրա վկայությունն է նաև այն, որ

մեր ուսանողների նախաձեռնությանն արձագանքել են աշխարհի
7 երկրների համալսարանների ուսանողներ:

Հարգելի ներկաներ, վերջին տարիներին մեր համալսարանը հաջողություններ է արձանագրել գործունեության բոլոր ուղղություններում և դրանում մեծ է ՀՀ վարչապետ, ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի ավանդը: Մենք մշտապես ստացել ենք նրա աջակցությունը, ինչի համար հայտնում եմ իմ երախտագիտությունը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ, մաղթում, որ գիտաժողովի եզրափակումը դառնա նոր գաղափարների սկիզբ:

Շնորհակալություն ուշադրության համար:

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ